# Տ. ԻՍԱՀԱԿ ԱԲԵՂԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս . ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(11 նոյեմբերի 2006 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

*«Զի հրեշտակք նոցա յերկինս՝ հանապազ տեսանեն զերեսս Հօր Իմոյ՝ որ յերկինս ...»*
(Մատթ. ԺԸ 10)

Սիրելի՛ հավատացյալներ,

Այս խոսքերը պատկանում են մեր Տեր Հիսուս Քրիստոսին. «Ասում եմ Ձեզ, որ երկնքում նրանց հրեշտակները մշտապես տեսնում են երեսն Իմ Հոր, որ երկնքում է»: Մարդ-Աստված հարաբերության մեջ Քրիստոս Իրեն հավատացողներին և հետևողներին անվանելով Աստծո զավակներ և Արքայության փոքրիկներ՝ վստահեցնում է, որ նրանցից յուրաքանչյուրը մի հրեշտակ ունի կարգված՝ պահպանության և խնամատարության համար: Թեև նրանք մարմնով և տարածությամբ կապված չեն մեզ, որովհետև հոգևոր զորություններ են, բայց ծառայում են Աստծո սպասավորությանն ու Արքայության նպատակներին (հմմտ. Եզնիկ Կողբացի ԻԳ), աստվածային տնօրինությունների ընթացքին և մշտապես տեսնում են Աստծո երեսը: Նրանք, որպես լույս աստվածային, մարդկանց առաջնորդում են բանական ճանապարհով դեպի փրկություն (Մատթ. ԻԴ 31, Մարկ. Ը 38), քանզի ուր որ Քրիստոս է քարոզվում, այնտեղ ծառայում են հրեշտակները Ավետարանի և Եկեղեցու ծավալմանը (Հովհ. Ա 52): Հետևապես, եթե այսչափ բարձրագույն զորությունները, ովքեր մշտապես տեսնում են երկնային Հորը, կյանքի են կոչվել պահապանի և խնամատարի առաքելությամբ, ո՞վ է այն մարդը, որ հանդգնում է համարձակորեն արհամարհել կամ գայթակղեցնել Աստծո զավակներին (Մատթ. ԺԸ 10):

Քրիստոս ճանապարհը, ճշմարտությունն ու կյանքը (Հովհ. ԺԳ 6, Ը 32), որպես աստվածային սիրո կատարյալ ապացույց և մարդկության կատարյալ հավատքի ճանապարհ դեպի աստվածություն, մարդ-Աստված հաղորդակցության բարձրագույն իրականացման մեջ, թողնելով Իր փառքը, երկնային գահը՝ աշխարհ եկավ, որպեսզի մարդկության մեջ խաղաղությունը թագավորի և որպեսզի այդ խաղաղությունը մխիթարություն լինի յուրաքանչյուրի համար: Եվ այս մարմնավոր ու հոգևոր միավորության մեջ, մարդու կոչման իրագործման ճանապարհին իրենց արժանի և ուրույն տեղն ունեն նրանք, ովքեր իրավունքն ունեն մշտապես կանգնելու Աստծո առաջ, տեսնելու Աստծո երեսը:

Սիրելի՛ հոգևոր զավակներ Հայ Եկեղեցու,

Այսօր մեր Եկեղեցու կյանքում հիշարժան օր է, քանզի Սուրբ Հրեշտակապետեր Գաբրիելի (որ նշանակում է՝ Աստծո պատկեր) և Միքայելի (որ նշանակում է՝ Աստծո հզոր) և ողջ երկնային զորքերի, որով բոլոր նրանց, ովքեր ծառայում են աստվածային տնօրինությանը, տոնակատարության հրաշալի օրն է, արդարների հովանավորությա՛ն օրը:

Սա այն օրն է, երբ մենք՝ մարմնավորներս ու հողեղեններս, անմարմին ու հրեղեն դասերի հետ փառավորում ենք Տիրոջը միասին, քանզի Տերն է մեր կենդանության և զորության անընդհատ աղբյուրը: Եվ մենք այսօր շնորհավորում ենք բոլոր նրանց, ովքեր բաժանում են մեր հոգևոր ուրախությունը՝ հոգևորական թե աշխարհական, բոլոր նրանց, ում անվանակոչության օրն է այսօր, քանզի Աստված երբեք տարբերություն չի դրել մարդկանց մեջ, այլ վարձատրել է ըստ արժանիքի և ըստ Իր ողորմության՝ պատվիրելով սիրել և բարություն անել միմյանց:

Յուրաքանչյուր օրվա և ամեն մի փորձության հաղթահարումից հետո մենք երախտապարտ ենք երկնային զորություններին, քանի որ Աստված կանխահոգ հեռատեսությամբ ինչպես որ ամեն պատարագի մեջ հրավիրում է ներքին հոգեկան վերափոխության, այնպես էլ դեռևս աշխարհն ստեղծելիս աստվածային տնօրինությամբ աստիճանավորությամբ նախապատրաստել է յուրաքանչյուր ազգի, ժողովրդի և անհատի հասունացումն ու փրկությունը, և իզուր են այսօր բոլոր այն շփոթ տեսություններն ու մոլորությունները, որպիսիք ամենատարբեր մակարդակների վրա փորձում են պարարտ հող շահել իրենց չարահակ ու չարահնար ապրումների համար:

Խոսքի վաճառքով զբաղվող մարդիկ (Բ Կորնթ. Բ 17), որպիսիք չեն հավատում Հոգու գոյությանն ու հրեշտակներին, հարությանն ու երկնային զորություններին՝ մեղանչելով աստվածային փրկագործության նպատակի դեմ, այնինչ Քրիստոս Իր ներկայությամբ Նոր Ուխտ է կապել մարդկության հետ, նոր ճանապարհ է բացել դեպի երկինք՝ ուղղելու համար մեր մեղսաթավալ կամքի ուղղությունը դեպի ճշմարիտ ինքնագիտակցություն: Եվ այդ գիտակցության անսպառ աղբյուրը երկրի վրա Եկեղեցին է. հայ հավատացյալի համար Հայ Եկեղեցին՝ հայ ժողովրդի ընտրյալ ներկայացուցիչն ու ազգային ինքնագիտակցության երաշխավորը, որի անսասանության, զարգացման ու տարածման ապահովման երաշխավորն աստվածային ամենուրեքությունն է:

Սիրելի՛ հայորդիներ, ձեր կյանքը կառուցեք իրական և անանց արժեքների վրա, որպեսզի որքան էլ հողմերը գան ու գնան, ձեր հոգևոր տունը չփշրվի թշնամյաց առաջ և Ս. Հրեշտակապետաց դասի հովանավոր բարեխոսությամբ Սուրբ Հոգու շնորհած լույսը կաթի մեր մտածումների և սրտերի մեջ, որպեսզի կարողանանք ուղղվել դեպի այն անվրեպ շավիղը, որն առաջնորդում է նուրբ ճանապարհով ու նեղ դռնով (հմմտ. **Ա. Տեր-Միքելյան**, Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնեականը, էջ 5) դեպի «հավատքի ճշմարտություն», «մշտասնունդ հաստատությամբ» և Սուրբ Գրքի վարդապետությամբ, քանզի ճշմարիտ հոգու համար Աստված տեսանելի է, քանզի

հավատքի լույսն է, որ առաջնորդում է մեզ ընթանալու առաջադիմությամբ և քանզի քրիստոնեական հավատքի հիմքն Ինքն Աստված է, Որին փառք հավիտյանս. ամեն:

Սիրելինե՛ր, գոհություն և փառք ենք բարձրացնում առ Աստված, որ առիթն ունենք հերթական անգամ նորոգելու մեր ուխտը.

Որդիական մեր պատրաստակամությունն ու հնազանդությունն ենք բերում Նորին Սրբություն Գարեգին Բ Վեհափառ Հայրապետին հոգևոր պատրաստության համար, եղբայրական մեր աղոթքն ու զորակցությունը Մայր Աթոռի ավագ լուսարարին՝ այսչափ գեղեցիկ հնարավորության համար, և քանի որ քրիստոնեությունը համաեղբայրության և հավատի բերկրանքի ճառագումն է մեզանում, սիրելի՛ եղբայրներ և քույրեր, պիտի ակնկալենք, որպեսզի ձեր աղոթքը միախառնեք մեր աղոթքին՝ տոնելու ճշմարտության հաղթանակի հերթական ավետիսը հոգենորոգ մեր կյանքի մեջ և թող «Հավերժական հույսն» ու «Անզուգական զուլը» Ս. Հրեշտակապետաց դասի հովանավոր բարեխոսությամբ հովանի և պահապան լինի հայ ժողովրդին ի Հայաստան, հԱրցախ և ի Սփյուռս աշխարհի հավիտյանս. Ամեն: